ՀՏԴ 93(=919.81)(56) + 947.25

Doi:10.54503/0135-0536-2024.3-3

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԴԱՎԱՆԱԿԱՆ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1715–1764 թթ.)*

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Բանալի բառեր՝ Կոստանդնուպոլսի հայ համայնք, հայ կաթոլիկներ, Հովհաննես Կոլոտ, Գրիգոր Շղթայակիր, Ս. Հակոբյանց վանք, Հակոբ Նալյան, Պետրոս Քյութուր, դավանական ներհակություններ, Անկյուրիա, թարգմանական կաթոլիկական գրականություն:

Նախաբան

XVII դ. վերջին տասնամյակներից և XVIII դ. սկզբներից Կոստանդնուպոլսի հայ համայնքում խորացող դավանական պայքարն իր մեջ առավ հասարակական բոլոր խավերին՝ Առաքելական եկեղեցու կարևոր դերակատարությամբ: Հայտնի է, որ համայնքի ներսում կաթոլիկական փոքրամասնությունը գաղափարաքարոզչական սնուցում էր ստանում լատիներենից և իտալերենից արված բազմաթիվ թարգմանություններով, որոնք միջոց էին դառնում հայ հանրության կրթված խավերի համար՝ ծանոթանալու ոչ միայն եվրոպական կրոնական գաղափարախոսությանը, այլև մշակութային արժեքներին ու փիլիսոփայական մտքին: Դավանական ներհակությունները լարվածության չափերի էր հասցնում կաթոլիկական քարոզչությունը՝ փորձելով առավել ընդլայնել իր հետևորդների շրջանակը և կտրել նրան ազգային եկեղեցուց ու նրա ավանդույթներից, որի հետևանքը պետք է լիներ հայ կաթոլիկների ապազգայնացումը և մեկուսացումն իրենց համայնքից: Իր հերթին, Առաքելական եկեղեցին հնարավոր միջոցներով մարտնչում էր ազգը պառակտող այդ քարոզչության դեմ, որով և նշված ներհակությունները հասնում էին հակամարտության: Այս վերջինն առանձնապես ցայտուն դրսևորվեց այն ժամանակ, երբ Օսմանյան պետությունը սկսեց քաղաքական նշանակություն տալ պետության ավանդականորեն ճանաչված միլեթները (հույն և հայ) խարխլող կաթոլիկական քարոզչությանը՝ ձգտելով կասեցնել հռոմեադավանության տարածումը և միլեթների եկեղեցիներին պարտադրելով անգիջում կեցվածք ընդունել դավանափոխության դրսևորումների դեմ: Այդ հասկանալի է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ պետությունը, մշտական պատերազմների մեջ լինելով եվրոպական տերությունների հետ, կաթոլիկությունը դիտում էր որպես թշնամական գաղափարախոսություն, որի նպատակն էր քայքայել կայսրության հիմքերը, և մյուս կողմից, ի դեմս դավանափոխ օսմանյան հպատակ-

* *Ներկայացվել է 04. X. 2024 թ., գրախոսվել է 11. X. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:*

ների, գոյացնել հինգերորդ զորասյուների ցանց՝ ապահովելու իր կայուն ներկայությունն ու ազդեցությունը կայսրության սահմաններում:

Դավանական ներհակությունները XVIII դ. սկզբից մինչև Հովհաննես Կոլոտի պատրիարքության շրջանը

Դավանական հիշյալ հակասություններով, ինչպես և օսմանյան պետության՝ հայոց պատրիարքությանը կառավարելի ընթացք թելադրող քաղաքականությամբ հարկ է բացատրել պատրիարքների օրապակաս պաշտոնավարումները հայ համայնքում՝ հատկապես XVIII դ. առաջին տասնամյակին և մինչև Հովհաննես Կոլոտ, երբ կաթոլիկների հանդեպ պետության համեմատաբար մեղմացած քաղաքականության և դրան զուգընթաց՝ նոր պատրիարքի լայնախոհ գործելակերպի պայմաններում դավանական ներհակությունները ստացան հարաբերականորեն զուսպ և չափավոր ընթացք: Բավական նշանակություն ունեցավ նաև այս իրողությունների հանդեպ սրություններից խուսափող և նախկին լարվածությունները թուլացնելուն հակամետ պատրիարքական իշխանության գործելակերպը՝ Հովհաննես Զմյուռնացի պատրիարքի հակակաթոլիկական անհանդուրժողականությունից հետո: 1707 թ. դեկտեմբերին նրան փոխարինեց Սահակ Ապուչեխցին, ով պատրիարքների պաշտոնակալության մեջ անսովոր թարմ հոսանք մտցրեց հնգամյա շրջանի իր երկարակեցությամբ, և որը Մ. Օրմանյանը վերագրում է նրա «վկայեալ հանդարտաբարոյութեանը»[1]: Սակայն այդ «հանդարտաբարոյությունը» պետք է ավարտվեր այնտեղ, որտեղից սկսվում էր կաթոլիկ Եվրոպայի հետ ռազմական բախումների պատրաստվող օսմանյան կառավարության համբերատարությունը 1713–1714 թթ.: Դրա համեմատ, կառավարությունն առաջին բնագիծ պետք է մղեր կայսրության մեջ մի պահ սառեցված հակակաթոլիկական տրամադրությունները: Վրա հասան հայ համայնքում կաթոլիկների և առաքելականների բախումներն ու առաջինների նկատմամբ վարչական հալածանքները (բանտ, թիարան և այլն): Այս պայմաններում ակտիվացավ պատրիարքը, որը, չբավարարվելով հակառակորդներին հետապնդելով, երկիցս ամբաստանեց նրանց մեծ վեզիրի առջև՝ «վասն նոյն բանի ֆռանկութեան»[2]: Դրան հետևեց Ս. Ապուչեխցու պաշտոնանկությունը, որի հիմքերը միշտ էլ կարող էր գտնել օսմանյան պաշտոնեությունը, այս անգամ՝ Ռոդոստոյի պաշտոնանկ առաջնորդի ամբաստանությունը Ս. Ապուչեխցու, իբր, ծպտված կաթոլիկ լինելու վերաբերյալ[3]:

Ս. Ապուչեխցուն 1714 թ. հաջորդած Հովհաննես Գանձակեցին, կարելի է կարծել, ներկայացնում էր համայնքի առավել պահպանողականորեն տրամա-

---

[1] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3195–3196:*

[2] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 756:*

[3] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 757: Ս. Ապուչեխցու հայտնի ներողամտությունը հայ կաթոլիկների հանդեպ՝ հակառակորդներին առիթ էր տալիս նրան կաթոլիկության մեջ ամբաստանելու համար: Աբր. Արծիվյանը՝ կաթոլիկական այդ մոլեռանդ քարոզիչը, գրում է, որ Գաղատիայում Կարապետ եպիսկոպոսի կողմից հալածվելուց հետո «չուեցի ի Կոստանդնուպոլիս առ Սահակ պատրիարքն [որը] տուաւ ինձ հրաման քարոզելոյ» (տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին. 1964, 197):*

դրված շրջանների դիրքորոշումը, որ չէր կարող համախոհներ չունենալ օսմանյան պաշտոնական շրջաններում, որոնց հակակաթոլիկական ուղղվածությունն ավելի կարծր էր դառնալու Վենետիկի հետ պատերազմի նախապատրաստվելու ժամանակաշրջանում: Հայ կաթոլիկների հալածանքը և այս ուղղությամբ իրադարձությունների ընթացքը հատկապես սուր բնույթ ստացան նշված թվականի հոկտեմբերին, երբ առաջինները ֆրանսիական դեսպանի թելադրությամբ Կոստանդնուպոլսում բազմամարդ ժողով գումարեցին՝ որոշելով դիմել մեծ վեզիրին՝ կաթոլիկ հայերի համար առանձին պատրիարք և եկեղեցի ձեռք բերելու առաջարկով: Գր. Գալեմքյարյանը մեղադրել է Հովհ. Գանձակեցուն՝ մեծ վեզիրին այս ամենի մասին մատնելու և բանն այնպես ներկայացնելու համար, թե կաթոլիկ հայերն ապստամբության են պատրաստվում օսմանյան պետության դեմ: Այս ամենն ավարտվեց մեծ վեզիրի կողմից կաթոլիկ երևելիների նկատմամբ վերահսկողություն սահմանելով և նրանցից յոթ մարդու շղթայակապ թիարան նետելով[4]: Այստեղ նկատենք, որ Գր. Գալեմքյարյանը Հովհ. Գանձակեցուն քսության մեջ մեղադրելիս չի թաքցնում իր դավանական համակրանքները. նախ վերոհիշյալ բազմամարդ ժողովի որոշումներն անհնարին էր թաքցնել իշխանությունների աչքից, և երկրորդ, Հովհ. Գանձակեցին չէ, որ կաթոլիկների՝ առանձին պատրիարք ունենալու պահանջը պետք է իբրև ապստամբություն ձևակերպեր: Վերը նշված միջադեպից շատ առաջ էլ, ինչպես հայտնի է, Բ. դուռն ապստամբություն էր համարում ավանդական միլեթներից բաժանվելու և դրանք հպատակների կողմից քայքայելուն հետամուտ ամեն մի փորձ:

1714 թ. այս դեպքերից հետո պոլսահայ համայնքում միջդավանական կրքերը զգալի վայրընթաց ապրեցին՝ կորցնելով իրենց սրությունը, որն իրեն շարունակ զգացնել էր տվել XVII դ. վերջին տասնամյակներին և XVIII դ. սկզբին: Վենետիկի հետ ռազմական առճակատումից հետո Բ. դուռը պետք է մասամբ վերանայեր իր հակակաթոլիկական կտրուկ ձեռնարկումները երկրի քրիստոնյա համայնքների նկատմամբ: Ասպարեզում հայտնվեց Հովհ. Գանձակեցուն փոխարինած Հովհաննես Կոլոտը (1715 թ.), որի պատրիարքությունը սկսվում էր հայ համայնքի առջև ծառացած բարդ խնդիրների պայմաններում, որոնց առանցքում էին Երուսաղեմի հայկական միաբանության սեփականությունների և բուն իսկ Ս. Հակոբյանց վանքի պահպանության ու կառավարման կնճռոտ հիմնահարցերը: Հայտնի են Հովհ. Կոլոտի և նրան միացած Գրիգոր Շղթայակրի հույժ արդյունավետ գործունեությունն այս անդաստանում, որի շնորհիվ վանքի պարտքը մարելու գործը դրվեց կանոնավոր և օրինական հիմքերի վրա, ինչն էլ հիմնականում մարվեց շուրջ տասնամյա ժամանակաշրջանում (1715–1726 թթ.)՝ ազգային երևելիների աջակցությամբ: Կարգավորվեցին նաև Ս. Հակոբյանց վանքի և Կոստանդնուպոլսի պատրիարքության իրավական փոխհարաբերությունները՝ դարձյալ վերջիններիս պատրիարքների և նրանց միացած նորընտիր կաթողիկոս Կարապետ Ուլնեցու գործակցությամբ: Դրա շնորհիվ Երուսաղեմի հայկական վանքը ստանում էր ինքնավար կառավարման իրավունք Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ իր ունեցած փոխհարաբերություններում, որով ավարտվում էր նախորդ տասնամյակներին

---

[4] *Գ ա լ է մ ք ե ա ր ե ա ն. 1915, 92–94, Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 758–759:*

վերջինիս ոչնչով չսահմանափակված և կամայական գործողությունները՝ Երուսաղեմի պատրիարքության նկատմամբ[5]:

Դավանական ներհակությունները Հովհ. Կոլոտի պատրիարքության շրջանում

Հովհ. Կոլոտի շուրջ համախմբվելու պոլսահայ աշխարհիկ և հոգևորական վերնախավի պատրաստակամությունը և նույն ժամանակներում համայնքում դավանական հակասությունների ակնհայտ մեղմացումը վկայում էր, որ Երուսաղեմի հայկական վանքի փրկության գործը զգաստության էր մղում ներհակ կողմերին, այդ թվում՝ հայ կաթոլիկներին աջակցող ֆրանսիական դեսպանին: Հայտնի է, որ Ֆրանսիան շահագրգռված էր Երուսաղեմում հայկական միաբանության դիրքերի ամրապնդմամբ՝ հենց այդտեղ կաթոլիկական սեփականություններն ուղղափառների հավակնություններից պատվարելու մտահոգությունից ելնելով, ինչը, տեսնում ենք, հատկապես 1720–1730-ական թվականներին Հովհ. Կոլոտի, Գր. Շղթայակրի և ֆրանսիական դեսպանի երկուստեք ըմբռնելի փոխհարաբերություններում: Համենայն դեպս, մեզ հայտնի չէ 1714 թ. հայ կաթոլիկների ընդվզման հայտնի միջադեպին անմիջապես հետևող մի քանի տարիներին դավանական լարվածության որևէ պոռթկում Կոստանդնուպոլսի հայ հանրության ներսում: Ընդհակառակը, պատրիարք Հովհ. Կոլոտի հեռադնա և հանդուրժող վերաբերմունքը հայ կաթոլիկների հանդեպ, դավանական ընդհարումները կանխելու խելամիտ դիրքի մշակումը, որ արտահայտվում էր նաև իշխանությունների միջամտությանը պատեհ-անպատեհ դեպքերում դիմելու՝ նախորդ գրեթե բոլոր պատրիարքների սովորությունը մերժելու իրողությամբ: Իր պատրիարքական իշխանության հնարավորությունները Հովհ. Կոլոտն իրացնում էր միաժամանակ երեք ուղղություններով, ինչը չէր իրագործել միջդավանական ծեծկռտուքի մեջ մարտնչող պատրիարքներից և ոչ մեկը. նախ՝ բանակցությունների գործընթաց սկսել կաթոլիկ փոքրամասնության հետ, միաժամանակ՝ Օսմանյան Թուրքիայում ֆրանսիական քաղաքականությունն իրացնող դեսպանի և ապա Կոստանդնուպոլսի կաթոլիկական միաբանությունների հետ, որոնց նա դիտարկում էր որպես եռագլուխ ամբողջություն և որոնք միասին ուղղորդում էին հայ հանրության մեջ արմատակալած կաթոլիկներին: Այստեղ կարևոր նշանակություն ուներ վերջիններիս համոզելը, որ հրաժարվեն միլեթների համակարգի դեմ բացահայտ առճակատումներից կամ այլ կերպ ասած՝ խուսափեն պետության թշնամական հակադարձումներից: Նկատենք, որ տասնամյակներ ի վեր հայ կաթոլիկներն իրենց վերոհիշյալ հովանավորների թելադրանքով այցելում էին միայն կաթոլիկական եկեղեցիներ և կրոնական ծեսերն ու արարողությունները կատարում էին ըստ կաթոլիկ դավանանքի՝ կտրվելով հայ եկեղեցու ավանդույթներից: Պառակտման հիմքն այս՝ արտաքուստ ձևական տարընթացի դրսևորումն էր, որ միաժամանակ կազմում էր նույն այդ պառակտման բովանդակությունը: Այստեղ է, որ անցիջում դիրք էին գրավում արմատական կաթոլիկական քարոզիչները, որոնք պատրաստ էին օսմանյան

---

[5] *Պատրիարքությունների բաժանման պաշտոնական վավերացման մասին տե՛ս Բ ա մ պ ո ւ ք ճ ե ա ն. 1984–1985, 35:*

իշխանությունների հալածանքներին մատնելու իրենց համակիրներին՝ հանուն դոգմայի և միանգամայն անպատրաստ լինելով որևէ զիջում անել դավանական խնդիրներում: Դավանական այսպիսի կարծրամտությունն անխառն տեսքով ի հայտ է գալիս Ա. Պալճյանի հայտնի աշխատության մեջ[6]*՝ առանձնանալով կաթոլիկական եկեղեցու հանդեպ իր նվիրվածությամբ և դավանական ակնածանքով: Այն տպագրվել է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանից՝ XVIII դ. առաջին կեսից ավելի քան մեկ դար և քառորդ տասնամյակ անց, թեև հրատապ նշանակություն ունի արդեն իր ժամանակի, կրոնից անկախ ազգայնության գաղափարի շուրջ մտավոր գործընթացների համատեքստում: Այն գրեթե ստույգ վերարտադրում է Հովհ. Կոլոտի ժամանակների կաթոլիկական քարոզչության առավել անզիջում կեցվածքի ելակետն ու գործելակերպը: Կոստանդնուպոլսի պատրիարքները և իրենց կուսակիցները, նկատում է Ա. Պալճյանը, «երեսանց չափաւորութեան ցոյց տալ սկսան, ուղղափառաց հաւատոյ (կաթոլիկական– Ա. Խ.) վարդապետութիւնը, կըսէին, համաձայն է մեր վարդապետութեան, եթէ տարբերութիւն կայ նէ՝ այն ալ արտաքին է, կաթողիկեայք և չկաթողիկեայք միայն բառերու վրայ կը վիճեն, միտքերնին նոյն է ... հարկ է որ ուղղափառք ալ չափաւորութեամբ վարուին... պէտք է որ, կըսէին, քանի մը ծեսերն ու սովորութիւնները գոնէ արտաքուստ ընդունին, ազգային (հերձուածական) եկեղեցիները յաճախեն, լատին եկեղեցիներէն հեռանան»*[7]*:*

Այս տեսակետն ամբողջովին և կտրուկ ուղղվում է Հովհ. Կոլոտի՝ դավանական հակասությունների մեղմացման և փոխադարձ զիջումների խոհեմ ու երկուստեք հավասարակշռված գործողությունների դեմ, որոնց և հակադրվում է առավելապաշտ Ա. Պալճյանը: Եվ դարձյալ, մեր առջև է Հովհ. Կոլոտի ժամանակի, այլև ամբողջ XVIII դ. առաքելականների և կաթոլիկ փոքրամասնությունների փոխհարաբերություններում սրացումների ու հաշտ գոյակցության փուլերի միջև հայ եկեղեցու և Հռոմի տարտամ պայմանավորվածության պատկերը: Հռոմը «Լռելեայն թոյլ տուած էր ուղղափառաց (հայ կաթոլիկներին– Ա. Խ.) միայն քանի մը խորհուրդներ հերձուածակողման (հայ եկեղեցու – Ա. Խ.) պաշտօնեաներէն ընդունիլ, այսինքն մկրտութիւնն ... Ամուսնութեան խորհուրդը, մեռելոց յուղարկաւորութիւնն ալ անոնց ձեռքն էր: Այսուամենայնիւ այս չափով ալ չէին շատանար պատրիարքներն և իրենց կողմնակցութիւնը, անդադար կը հալածէին ուղղափառները, որոնց թիւը կաճեր օրըստօրէ»[8]*: Ա. Պալճյանը հախուռն մերժում է փոխզիջումները՝ Կղեմես XI պապի ոգով մեղադրելով «հաշտասէր կաթողիկեայց» ներողամտությունը:*

Հիրավի, դրան հակառակ՝ Հովհ. Կոլոտը բանակցության եզրեր էր գտնում և կաթոլիկ հայերի, և ֆրանսիական դեսպանի ու լատին բարձրաստիճան հոգևորականների հետ ունեցած հարաբերություններում՝ առանձնացնելով հայ կաթոլիկների և կաթոլիկամետների՝ ազգային եկեղեցի հաճախելու պարտադիր պայմանը: Այս վերջինի խախտումն էր, որպես միլեթից հեռանալու ակնհայտ արարք, գրգռում օսմանյան իշխանություններին՝ պատրիարքներին

[6] Պ ա լ ճ ե ա ն. 1878:
[7] Պ ա լ ճ ե ա ն. 1878, 169–170:
[8] Պ ա լ ճ ե ա ն. 1878, 170–171:

հրամայելու, որ կասեցնեն դավանափոխների՝ կաթոլիկ եկեղեցի հաճախելը, որտեղ ծեսերն ու արարողությունները, բնականաբար, կատարվում էին զուտ այդ եկեղեցու դավանանքի համեմատ: Եվ այս իմաստով հատկանշական է, որ հայ համայնքի ներսում ընդհարումները կանխելու նպատակով Հովհ. Կոլոտը 1720 թ. իր մոտ է հրավիրում հայ կաթոլիկ երևելիներին, որ գոնե տոնական և կիրակի օրերին այցելեն հայ եկեղեցիներ[9]: Պատվերը ձևակերպվել էր, ինչպես տեսնում ենք, զուտ հորդորական ոգով, որ, ի դեպ, շեշտում է Մ. Զամչյանը՝ «աղաչեաց զնոսա, զի գոնէ յաւուրս տօնից և կիւրակէից մի զանց արասցեն գալ յեկեղեցի Հայոց»[10]: Այս հորդորը կրկնվեց երկիցս՝ ուղղվելով նաև լատին եպիսկոպոսին ու լատին կղերի ներկայացուցիչներին, որոնք, սակայն, վիժեցրին ձեռք բերված համաձայնությունը և հայոց պատրիարքին այլ բան չէր մնում, քան յուրայինների ճնշման պայմաններում, «պէտք եղած բացատրութիւնը տալ կառավարութեան», որը և չհապաղեց դիմել վարչական խիստ միջոցների՝ ընդդեմ ազգային եկեղեցի չհաճախող հայ կաթոլիկների[11]: Նրանց և նրանց համակիրների մի իսկական որս սկսվեց, որը շարունակվեց 1721–1722 թթ.: Պետք է կարծել, որ Կոստանդնուպոլսի օրինակով Արևմտահայաստանի քաղաքներում ու հայաբնակ վիլայեթներում ևս կաթոլիկական եկեղեցիները վերահսկող պարեկները ձերբակալում էին այնտեղ ելումուտ անող հայերին, դրամական տուգանքի ենթարկում նրանց կամ մատնում թիարանի և աքսորի: Այս կերպ հալածանքները տարածվեցին Կարինում, Սեբաստիայում, Եվդոկիայում, Երզնկայում, Բաբերդում, Ամիդում, Անկյուրիայում և այլուր[12]:

Հովհ. Կոլոտն այս պայմաններում իսկ շարունակում էր պահպանել երկխոսության իր պատրաստակամությունը ֆրանսիական դեսպանի հետ. նույն 1720 թ. նա բավարարեց վերջինիս խնդրանքը՝ վավերացնելու 1712 թ. կաթոլիկների կողմից գաղտնի հրատարակված ժամագիրքը, որը փոխհաղորդակցական քայլ էր՝ դյուրացնելու հռոմեադավան հայերի՝ ազգային եկեղեցի հաճախելու կնճռոտ խնդրի լուծումը, այլ կերպ ասած՝ դավանական փոխհամաձայնության դրսևորում Կոլոտի կողմից[13]: Ազգային եկեղեցիներում դրա գործածությունը պատրիարքը գնահատում էր առավելապես դավանական փոքրամասնությանը գոհացնելու տեսանկյունից:

Նկատենք, այսուհանդերձ, որ կաթոլիկական գաղափարախոսությունը շարունակում էր հաջողություններ գրանցել հայ եկեղեցու հետևորդների շրջանում, իսկ ամբողջ երկրի չափերով դավանափոխների հալածանքները հասցնում էին հակառակ հետևանքների, որ բարեբեր հող էր ստեղծում կաթոլիկական քարոզչության համար: Կախված կաթոլիկ Եվրոպայի հետ փոփոխվող՝ Բ. դռան քաղաքականությունից և դրա համեմատ ընթացող մակընթացություններից ու տեղատվություններից, օսմանյան պետությունը մերթ խստացնում, մերթ թուլացնում էր պայքարը դավանափոխության ու կաթոլիկական քարոզչության նկատմամբ, և հայ համայնքն ու նրա պատրիարքարանը հարկադրված էին հարմարվել այս, փաստորեն, քաղաքական փոփոխա-

---

[9] Օրմանեան. 2001, 3271, Բամպուքճեան. 1984, 38–40:
[10] Զամչեանց. 1786, 776:
[11] Օրմանեան. 2001, 3272:
[12] Զամչեանց. 1786, 777–779:
[13] Բամպուքճեան. 1984–1985, 38:

մտության կանոններին՝ ունենալով զգալի կորուստներ և հաջողություններ ազգային պառակտման դեմ պայքարի բարդ ու հակասական պայմաններում: Կարծում ենք, որ Հովհ. Կոլոտի գործունեությունն ու դիրքորոշումն այս ասպարեզում ամբողջովին թելադրվում էր ազգային միասնության ամրապնդման և եկեղեցու հմայքի պահպանության շահերով, երբ միջակա, կողմերին երկուստեք ընդունելի զիջումներ և համաձայնություններ էր ապահովում դավանափոխության վտանգների դեմ, որոնց սպառնալիքն ամենևին նոր երևույթ չէր և որը գոյություն ուներ դարեր շարունակ: Այստեղ ավելացնենք միայն, որ կաթոլիկական քարոզչության հանդեպ պետական վերոհիշյալ բեկբեկուն քաղաքականությունը և դավանափոխության հանդեպ հայ եկեղեցու՝ դրանից ածանցվող համարժեք գործելակերպը, ի վերջո, հասցնում էին մի կողմից՝ արևմտյան գաղափարների տարածմանը հայերի մեջ (դպրոցներ, տպարաններ՝ իրենց թարգմանական կրոնական և աշխարհիկ բնույթի գրականությամբ), և մյուս կողմից՝ ազգային պահպանողականության գործնական զարգացմանն ու զորացմանը: XVIII դ. պահպանողական այս մտայնությունն էր, որ հռոմեադավանության դեմ նախապես իր բուռն ու ծայրահեղ դրսևորումների տեսքով պետք է կրեր նույն այդ քաղաքակրթության ազդեցությունն ու հասարակական հոսանքի վերածվեր XIX դ. երկրորդ կեսին՝ դրանից հետո ևս ապացուցելով իր կենսունակությունը հայ հանրության մեջ: Իսկ առայժմ և ամբողջ XVIII դ. շարունակվում էին մերթ բացահայտ, մերթ թաքնված դավանական ընդհարումները Հովհ. Կոլոտի և նրան հաջորդած պատրիարքների ժամանակաշրջանում: 1727 թ. գայթակղության առարկա դարձավ հայկական եկեղեցիներում Քաղկեդոնի ժողովի և Լևոն պապի դեմ նզովք կարդալը՝ համապատասխան շարականների երգեցողությամբ, որից վրդովված կաթոլիկները դիմեցին Կոստանդնուպոլսում գտնվող Ուլնեցի կաթողիկոսին և Հովհ. Կոլոտին՝ վերջ տալու իրենց դավանական զգացումները նսեմացնող այդ երևույթին: Հակառակ դեպքում կաթոլիկները դադարեցնելու էին ազգային եկեղեցիներ հաճախելը, որ պարբերաբար կրկնվում էր և որը կնշանակեր սառեցված գժտությունների բորբոքում: Կաթողիկոսն ու պատրիարքը, ի սեր խաղաղության, ընդառաջեցին հռոմեադավանների պահանջին՝ արգելելով նշված շարականների գրգռիչ հատվածները, այլև հրավիրելով նրանց համախոհներին՝ քարոզ կարդալու ազգային եկեղեցիներում, որ, բնականաբար, ապահովելու էր կաթոլիկների հաճախումները: Ավելին, հայ հոգևոր գլուխների ներկայացուցիչները և լատինների եպիսկոպոսը փոխայցեր կատարեցին՝ ի նշան կայուն հաշտության[14]*:*

Կարելի է կարծել, որ հայ կաթոլիկներին ազգային եկեղեցիներում ամբիոն տրամադրելն ինքնին ենթադրում էր կողմերի միջև բանավիճային պայքարի օրինականացում: Եվ այստեղ դժվար չէ նկատել պատրիարքի ու նրա համախոհների մտահոգությունը՝ արևմտյան եկեղեցական արժեքները ճանաչելու միջոցով զորացնելու ազգային եկեղեցու քարոզիչների պատրաստականությունը, տեսական միտքն ու խոսքը հակառակորդների դեմ: Եվ այս իմաստով ուշագրավ է Հովհ. Կոլոտի բացատրությունը Հ. Լաուռեթոյի «Անտառ այլաբանութեան» երկի հայերեն թարգմանության (1736 թ., թարգմ. Ղ. Խարբերդ-

[14] *Բ ա մ պ ո ւ ք ճ ե ա ն. 1984–1985, 48:*

ցի) առթիվ: Ըստ էության, Հովհ. Կոլոտն այստեղ բացատրում է իր տեսակետն արևմտյան եկեղեցական գործերի թարգմանական հրատարակությունների անհրաժեշտության վերաբերյալ. «Բայց կամ նկատեալ ի փարթամութիւնն լատինացւոց և յաղքատութիւն ազգին իմոյ, – գրում է նա, – և իմ իսկ գլխովին (ի կողմանէ իմաստութեան և մեկնութեան Աստուածաշունչ գրոց) թաղձէի և մորմոքէի ի սրտի իմում թէ վասն ոյր զհեղգութիւն նախամեծար առնէ ազգն իմ և զանուսումնութիւն քան զանուսումնասիրութիւնն ընտրելի համարի և մանաւանդ թէ վասն ոյր պատճառի քան զազգն իմ առաւել աղքատագոյն ազինք պերճացեալ իցեն իմաստութեամբ ... յորոց և զբազում բանս ի նոցունց թարգմանեալ ցուցանեն նախնիք մեր. վասն որոյ գոնէ զի թերեւս այլոցն փարթամութեամբ զազգն և զիս փարթամեցուցից և բոլորի Աստուածաշունչ գրոց համառօտաբան այլաբանական մեկնութիւն ի լոյս ածից ...»[15]*:*

Շատ ուշագրավ այս մտորումները մի հայտնի չափով առարկումներ էին ազգային պահպանողականությանը, որը կտրուկ մերժում էր թարգմանական գործի կարևորությունը՝ առ ի երկյուղի կաթոլիկական դավանության տարածման ու ամրապնդման: Հովհաննես Հաննան, որին իրավամբ պետք է համարել Հովհ. Կոլոտի համախոհն ու աշակերտը, իր հերթին սատարում էր նրան, երբ խստիվ դատափետում էր պահպանողական անհանդուրժողականությունը, որ, իր համոզմամբ, ծայր էր առնում «ի բարբարոսաբար տգիտացն մերայնոց»[16]*:*

Կաթոլիկական թարգմանական գրականության տպագրությունն անհրաժեշտ, բայց բավարար պայման չէր կաթոլիկական քարոզչությունը կասեցնելու և դրա տարածումը կանխելու համար: Բոլոր դեպքերում կաթոլիկական հայերեն հրատարակություններն ունեցան, կարծում ենք, երկակի հետևանքներ. մի կողմից՝ դրանք նպաստում էին ազգային եկեղեցու կրթված հետևորդներին՝ ծանոթանալու արևմտյան քրիստոնեական՝ դավանական արժեքներին և հագեցնելու նրանց ճանաչողական պահանջարկը՝ հիմնավորելու ազգային դավանական տեսակետն ու մարտնչելու կաթոլիցիզմի դեմ, և մյուս կողմից՝ նպաստում այդ նույն կաթոլիկության հայ ջատագովների քարոզչական գործունեությանը՝ ազգային եկեղեցու դավանական տեսակետը հերքելիս:

Դավանական շարունակական ընդհարումների շարքում ոչ պակաս նշանակություն ունեին նյութական շահերի հակասություններն ու բախումները, որոնք հիմնականում անտեսվել են մեր պատմագիտական գրականության մեջ՝ երբեմն ի հայտ գալով թեթևակի ակնարկների տեսքով: Դավանական հակասություններն այս դեպքում դրսևորվում էին մանավանդ հարկահանության գործընթացում կողմնակալ մոտեցումների, կաթոլիկ անձանց թվաշատությամբ հայտնի թաղերի (եկեղեցիների) աչառու բաշխումների դեպքում: 1731 թ. այրված Ս. Լուսավորիչ եկեղեցու նորոգման ծախսերը, բնականաբար, պետք է հոգային «ալթը ջեմաաթի» (վեց հայկական համայնքների) ծխականները, և այս եկեղեցու (որտեղ զգալի թիվ ունեին հայ կաթոլիկները) վերաշինության

---

[15] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1966, 49: Բ. Կյուլեսերյանն իրավացիորեն նկատում է, որ Աստվածաշնչի մեկնությունների հայերեն թարգմանությունները հետամտում էին «հայ մտաւորականութիւնը բարձրացնել արեւմտեան գրականութեան առողջ հոսանքով մը» (Կ ի ւ լ է ս է ր ե ա ն. 1904, 45):*

[16] *Հ ա ն ն ա. 1734, 178:*

համար սահմանված տուրքերը հունից հանեցին դրանց անարդար չափերից վրդովված հռոմեադավաններին՝ գժտվելու ազգային իշխանությունների հետ: Մ. Չամչյանը դրան անդրադարձել է գուսպ, բայց ուշագրավ դիտողությամբ. երբ հրդեհվեց եկեղեցին, գրում է նա, «Յայնժամ փոյթ կալեալ հայոց նորոգ չինել զայն՝ բազում ինչս ծախեցին առնուլ հրաման արքունատ. և որ ինչ ծախեցաւ ի նոյն, միապէս ետուն յերկուց կողմանց ի հայոց (իմա՝ առաքելականների և հռոմեադավանների – Ա. Խ.) ... Այլ սակայն ի լինել բազում խօսից ի մէջ երկաքանչիւր դասուց՝ գրգռեցաւ նոր խռովութիւն, մինչև արհամարհել զեկեղեցիս իրերաց և յառնել ի վերայ միմեանց. որով և ժողովուրդք միւսոյ դասուն՝ իսպառ մեկնեցան յեկեղեցեացն հայոց»[17]:

Ինչ ասել կուզի, դրան հետևեց հակառակորդի բողոքն առ արքունիք, որը չհապաղեց հրահանգել՝ ձեռնարկելու մեզ հայտնի պատժիչ միջոցառումները լատինների եկեղեցի այցելող հայերի դեմ, սակայն գործն այս անգամ ավարտվեց տուգանքներով: Ավելին, ավստրիական և ֆրանսիական դեսպանների՝ հօգուտ կաթոլիկ հայերի արված բողոքից հետո Բ. դուռը դիմեց չքմեղանալու իր փորձված մեթոդին՝ ամբողջ մեղքը բարդելով պատրիարքի և նրա յուրայինների վրա: Մեծ վեզիր Հէքիմօղլու Ալի փաշան աքսորի սպառնալիքով հրամայեց պատրիարքին և մյուս հայ գլխավորներին՝ «վասն բանի կաթոլիկութեան և ֆռանկութեան»՝ վերջ տալ կաթոլիկներին նեղելուն[18]: Հավանական է, որ դավանական ներհակությունները հաճախ շատ ավելի մեղմ բնույթ կունենային և աղետալի հետևանքների չէին հասցնի կողմերին, եթե երկուստեք հարգեին պայմանավորվածությունները և չբորբոքեին հակադիր կրքերը, եթե երկպառակությունն չմիջամտեին մի կողմից՝ Բ. դուռը, և մյուս կողմից՝ կաթոլիկական ու ճիգվիտ արմատականները, որոնք անգիջում հորդորներով նորոգում էին կողմերի նիրհած անհանդուրժողականությունը միմյանց նկատմամբ:

1733–1734 թթ. վերոհիշյալ միջադեպից հետո, երբ Բ. դուռը հայերին արգելեց կաթոլիկներին վրդովող շարականների և նզովքի շրջանառությունը ազգային եկեղեցիներում, արքունի չինությունների վերակացու Շիրին խալֆան մեծ վեզիրի մոտ ամբաստանեց կաթոլիկ հայերին, որ նրանք հայկական եկեղեցի չեն գնում և չեն հնազանդվում հայոց պատրիարքին[19]: Մ. Օրմանյանը գրում է, որ այդ նույն անձն է գրգռել մեծ վեզիր Էսսեյիդ Մեհմեդ փաշային՝ գործի դնելով իր ազդեցությունը, որից հետո փաշան հրաման է ուղղում Հովհ. Կոլոտին՝ անհնազանդների մասին տեղեկացնել իրեն[20]: Պատրիարքին մնում էր միայն մեծ ջանքեր գործադրել՝ ընդհարումների առաջն առնելու համար. նա իր մոտ հրավիրեց հայ կաթոլիկ երևելիներին և հաջողեց համակերպվելու մղել նրանց[21]:

[17] Չ ա մ չ ե ա ն ց. 1786, 805:
[18] Չ ա մ չ ե ա ն ց. 1786, 805:
[19] Չ ա մ չ ե ա ն ց. 1786, 807:
[20] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3353:
[21] Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3353: Տե՛ս նաև Բ ա մ պ ո ւ ք ճ ե ա ն. 1984–1985, 56–57:

Մանակի բռնություններով ավարտվեց 1735 թ. մայիսին հայ կաթոլիկների փորձը՝ Կոստանդնուպոլսում ձեռք բերել առանձին եկեղեցի իրենց համար՝ որով ազգային կամ կաթոլիկական եկեղեցի հաճախելու այլընտրանքը, նրանց կարծիքով, կվերանար և՛ հայ կաթոլիկները կազատվեին և՛ առաքելականների, և՛ լատինների ճնշումներից: Արկածախնդրական այս առաջարկը, որ արել էին լատինաց եպիսկոպոսը և Ֆրանսիայի դեսպանը, որքան էլ գայթակղիչ հայերի համար, չէր կարող ընդունվել Բ. դռան կողմից, որը ավանդաբար, և այդ չէր կարող հայտնի չլինել հայ կաթոլիկներին ու նրանց հրահրողներին, օսմանյան պետության հիմքերը չէր պատկերացնում առանց միլեթների ամբողջականության ու անվթարության: Եվ այս անսովոր մտահղացումն իր վախճանը գտավ սովորական (բայց այս անգամ ոչ մեծ ցնցումներով)՝ հռոմեադավանների մի քանի գլխավորների ձերբակալությամբ և բանտի ու թիարանի դատապարտումով[22]*:*

1730-ական թվականների դավանական ընդհարումների համեմատաբար չափավոր դրսևորումներն ու լարվածության թուլացումը հայ համայնքի կողմերի միջև, կարծում ենք, պետք է բացատրել վերջինիս համար առավել մտահոգիչ դարձած՝ Երուսաղեմի Ս. Տեղյաց շուրջ ծավալվող հայ-հունական բանավեճով: Այստեղ չխորանալով դրա մանրամասների մեջ՝ նշենք միայն, որ Երուսաղեմում քրիստոնեական միաբանությունների միջև անցիջում պայքարի ընթացքում (հանուն սեփականությունների՝ եկեղեցական շինություններ, կալվածքներ, սրբատեղիներ կամ դրանց հատվածներ և այլն) կաթոլիկական միաբանությունը, տագնապած ուղղափառ կողմի հավակնություններից, մանավանդ վերջինիս՝ հայկական Ս. Հակոբի վանքին տիրանալու գործում զգալի հաջողություններից հետո, հակված էր սատարելու հայերին: Այս առթիվ Մ. Օրմանյանը նկատում է, որ հույս ունենալով ֆրանսիական պաշտպանության վրա՝ Գր. Շղթայակիրը և Հովհ. Կոլոտը գիտեին, որ «Երուսաղէմի խնդիրներու մեջ հայոց և լատինաց շահերը համերաշխ կընթանային յունական ոտնձգութեանց դէմ»[23]*:*

Վերն ասված՝ 1731 թ. հայ կաթոլիկների՝ առանձին եկեղեցու մտահղացման և նրանց դեմ ուղղված հալածանքներից հետո համայնքի վերնախավն ինքն էր դիմելու ֆրանսիական դեսպանին՝ աջակցելու Ս. Հակոբի վանքը և մյուս սեփականությունները, այդ թվում՝ հաբեշների սեփականությունները հունական սպառնալիքներից պաշտպանելու գործում: Հույները բավական հաջողությունների հասան մեծ վեզիր Կյուրճի Իսմայիլի ժամանակ. 1735 թ. սկսվեց վանքը հույներին հանձնելու գործընթացը, և միայն դրանից հետո ֆրանսիական դեսպանը համաձայնեց միջամտել հայ-հունական կոնֆլիկտին՝ տարհամոզելով նոր մեծ վեզիրին, որ սա կասեցնի հունական կողմին ի նպաստ գործողությունները[24]*: 1736 թ. մայիսի վերջերին հայերին և դեսպանին անհրաժեշտ փաստաթղթերով սատարելու համար Երուսաղեմից Կոստանդնուպոլիս մեկնեց*

---

[22] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 808, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3353–3354:*
[23] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3380–3381:*
[24] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 810:*

Գր. Շիրվանցի պատրիարքը, որի մասին պատմում է վերջինս՝ վավերագրի եզակի արժեք ունեցող իր հայտնի շարադրանքում[25]:

Դեսպանի՝ հօգուտ հայերի միջամտության պայմաններում, ընդհուպ մինչև 1739 թ., դադարեցին դավանական պառակտումները հայ համայնքում: Ավելի շուտ, Հովհ. Կոլոտին և կողմնակիցներին հաջողվեց զսպել կողմերի անհանդուրժողականությունը, որը, սակայն, այս անգամ պոռթկաց պատրիարքի դեմ՝ Կոստանդնուպոլսում էջմիածնի նվիրակ Պետրոս Քյութուրի հայտնի միջադեպով: Հովհ. Կոլոտի հակառակորդները՝ ծայրահեղ պահպանողական առաքելականներ, դժգոհ լինելով կաթոլիկ ազդակիցների հետ մերձեցումներից և որոնց, ըստ Մ. Չամչյանի, «արեւելցի կոչէին», 1737 թ. բացահայտորեն հանդես եկան պատրիարքի դեմ՝ նպատակ ունենալով տապալել նրան և պատրիարք հռչակել իրեն՝ Պ. Քյութուրին: Սրա կողմնակիցները, գրում է Գր. Պասմաճյանն իր հուշերում, «յարեան ի վերայ նորա ի մէջ եկեղեցւոյն սուսերօք եւ բրօք ... զաղմուկս յարուցին եւ նախատական բանս եւ հայհոյութիւնս խօսեցան, եւ այնքանս, որք կամէին ի կենաց հանել զինքն որ հազիւ զերծաւ եւ կարաց զանձն իւր ապրեցուցանել ի ձեռաց խստասրտոց անօրինաց եւ այնպիսի տիրատեաց ժողովրդոց»[26]:

Միջադեպն այնքան լուրջ էր և վտանգավոր, որ միջամտեցին հիվանդ Գր. Շղթայակիրը, որին պատգարակով բերեցին եկեղեցի, և Հ. Նալյանը՝ նզովելով Հովհ. Կոլոտի հակառակորդներին: Ընդամին, ցնցված յուրայինների ատելության այդ ցույցից, Գր. Շղթայակիրը քրեական դատաստան պահանջեց ծայրահեղների նկատմամբ՝ առաջարկելով մայրաքաղաքի եկեղեցիների ներկայացուցիչներից մի պատվիրակություն կազմել, «որպեսզի նոքա զայնպիսիս անձինս (խռովարար անձանց— Ա. Խ.) ըմբռնեալք տարցեն առ դատաւորս և եղիցին նոքա պատժեցեալք ի նոցունց ...»[27]:

Ընդվզողները ներկայացնում էին ազգային եկեղեցուց դուրս ամեն ինչ հախուռն մերժող և հայ համայնքում շփոթություններ նյութող կարծրամիտների ձեռքին խաղալիք դարձած տգետ խավերին: Մ. Չամչյանը դրանց անվանում է «արևելցի»[28], *անշուշտ, պարսկահայերին՝ Հայաստանի արևելյան գավառներից Կոստանդնուպոլիս եկած հայերին: Հարկավ, Քյութուրը Հովհ. Կոլոտին մեղադրելիս՝ նրա դեմ գրգռել է հենց այս հայերին, որոնք դժգոհ էին կաթոլիկ ազդակիցների հանդեպ նրա մեղմ վերաբերմունքից: Հակառակ դեպ-*

---

[25] *Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Ս. Աթոռոյս՝ յԵրուսաղէմէ ի Կ. Պոլիս. 1866, 184–190: Ուղղափառների հետ հայերի բանավեճն ավարտվեց 1739 թ.՝ Երուսաղեմում Ս. Հակոբյանց վանքի, որպես հայկական ժառանգական սեփականության ճանաչումով (Տէր-Յովհաննէսեան ց. 1890, 54–55: Աղաւնունի. 1929, 85):*

[26] *Յիշատակարան Պասմաճեան Գրիգոր վարդապետի. 1908, 29:*

[27] *Տայեան. 1930, 67:*

[28] *Չամչեանց. 1786, 812: Գ. Բամպուքճյանը 1737 թ. «մոլեռանդ ազգայիններու» կազմած խմբակցության առանցքն է համարում մայրաքաղաքի կեսարացիներին, որոնց ավագներին հեղինակավոր Ս. Սարաֆյանը հորդորում է «այս խաչակրութեան վերջ տալ, ինչ որ իրենց կողմէ կընդունուի» (Բամպուքճեան. 1984–1985, 188):*

քում դեսպանը Հովհ. Կոլոտից չէր պահանջի հեռացնել Քյութուրին մայրաքաղաքից, որ կատարելուց խուսափեց պատրիարքը՝ փակելով այս խնդիրը[29]:

Հետագա ներհակություններ

Ըստ երևույթին, վերոհիշյալը Կոստանդնուպոլսում 1730-ական թվականների դավանական վերջին հուզումն էր, որն իր շարունակությունը պետք է ունենար Անկյուրիայում, այս անգամ երկկողմանի՝ կաթոլիկ հայերի և առաքելականների մասնակցությամբ: Կոստանդնուպոլսում վերահսկվող իրադրությանը հակառակ՝ 1741 թ. Անկյուրիայում բավական թվաշատ հայ կաթոլիկներն իրականացրեցին այն, ինչը չհաջողվեց մայրաքաղաքում՝ տիրելով յոթ եկեղեցիներից չորսին: Բավական աղմկահարույց այս իրադարձությունը ևս ավարտվեց նրանով, որ իշխանությունները, նոր պատրիարք Հակոբ Նալյանի ձեռնարկած զուտ կրոնավարչական միջոցներին զուգընթաց (Ս. Սարաֆյանին, ապա Թ. Թամսարալյանին Անկյուրիայի առաջնորդ նշանակելը)՝ աքսորի մատնեցին կաթոլիկների շարժման քսանչորս հոգևորական և աշխարհական գլխավորների[30]:

Անկյուրիայի հուզումները 1744 թ. գործողության ազդակ դարձան Կոստանդնուպոլսի կաթոլիկների համար, ընդամին, արդյունավետ համարվող նոր՝ եկեղեցիների տիրանալու գործելակերպով: Թիրախ էին ընտրվել Սամաթիայի Ս. Գեորգը և Ղալաթիայի Ս. Լուսավորիչը: Գործն այս անգամ ևս ավարտվեց սովորական դարձած՝ կաթոլիկների վարչական դատաստաններով, ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ Անկյուրիայում[31]:

1730-ական թվականների դավանական հակասությունները Կոստանդնուպոլսում սովորաբար աչքի չեն ընկել իրենց հակամարտ բնույթով և գրեթե միշտ ավարտվել են կողմերի միջև բանակցություններով, եթե չհաշվենք իշխանությունների գործադրած վարչական բռնի գործողությունները կաթոլիկների դեմ: Դրան նպաստում էին Հովհ. Կոլոտի հաշտարար դիրքորոշումը և ֆրանսիական դեսպանի գործուն միջամտությունը իրադարձությունների ընթացքին՝ երկուստեք համաձայնեցված գործելու ողջախոհությամբ: Մասնավորապես հունից դուրս եկած ներհակությունների կարգավորմանը նպաստում էր ֆրանսիական քաղաքականությունն Օսմանյան Թուրքիայում իրականացնող այդ երկրի դեսպանը՝ հակառակ հայ եկեղեցու դեմ կաթոլիկական քարոզչության անհաշտ կեցվածքի: Պատրիարքին և նրա յուրայիններին հաշտության ու համբերատարության էին մղում հույն ուղղափառների հետ 1734 թ. ի վեր մերթ հանդարտվող, մերթ բորբոքվող բանավեճը Երուսաղեմի հայկական սեփականությունների, այդ թվում՝ Ս. Հակոբյանց վանքի պատկանելության շուրջ, որի ընթացքում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը կարողացավ ապահովել ֆրանսիական դեսպանի աջակցությունը՝ հօգուտ Ս. քաղաքում հայերի իրավունքների պահպանության: Դավանական սրացումները մեղմելու գործում Հովհ. Կոլոտն ու նրա համախոհները հաջողությամբ օգտագործեցին կաթոլիկության հակված, բայց ազգային եկեղեցու հետ դեռևս կապերը պահպանող ազդեցիկ հայ հոգևորականների ներուժը: Այդ հոգևորա-

---

[29] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 812:*

[30] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 824–825, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3394–3395:*

[31] *Զ ա մ չ ե ա ն ց. 1786, 826:*

կաններից էր Ս. Սարաֆյանը՝ Հովհ. Կոլոտի և Հ. Նալյանի շրջապատի հեղինակավոր անձանցից մեկը, որը Պետրոս Քյութուրի միջադեպի ժամանակ Կոլոտին պաշտպանել էր պահպանողականների հարձակումներից և ապա Հ. Նալյանի կողմից Անկյուրիա էր ուղարկվել՝ դաղարեցնելու դավանական ընդհարումները (վերջին դեպքում՝ անհաջող արդյունքով)[32]:

Հ. Նալյանի պատրիարքության շրջաններում (1741–1742 թթ., 1752–1764 թթ.) Ակյուրիայի և Կոստանդնուպոլսի դեպքերից հետո, երբ կաթոլիկներն անհաջող փորձեր արեցին տիրանալու ազգային մի քանի եկեղեցիների, դավանական սրացումների չենք հանդիպում, որ մասամբ կարելի է բացատրել Օսմանյան պետության հակակաթոլիկական կեցվածքի մեղմացմամբ: Իրենք՝ կաթոլիկ եկեղեցու գլխավորները ևս, վերոհիշյալ դեպքերից հետո, ինչպես երևում է, նոր մարտավարություն էին որդեգրել. Կոստանդնուպոլսի հայ կաթոլիկներն անցել էին յուրատեսակ ընդհատակ՝ հայկական ծեսերն ու արարողությունները կատարելով տներում կամ այլ, ոչ կրոնական կառույցներում, որ նշանակում էր իշխանությունների հետապնդումներից խուսափելու ուղեգիծ: «Պոլսոյ մէջ,– գրում է Հ. Ասատուրը,– հռոմեականները սկսած էին տունները պատարագ ընել՝ ծնծղայով և քշոցով. Զօֆճի խանին մէջ ալ, որ կեդրոնն էր գաւառացի Հայ-Հռոմեականներուն, պատարագ կըլլար»[33]:

Հովհ. Կոլոտի հայտնի ներողամտությունը կաթոլիկների հանդեպ, նրա պատրիարքական պաշտոնի հետ փոխանցվեց նրա աշակերտ Հ. Նալյանին: Բայց այդպիսի դիրքորոշումը հազիվ թե ըմբռնելի լիներ ազգային ծայրահեղ պահպանողականության համար: 1749 թ. մարտի 26-ի հայտնի անակնկալը, երբ Հ. Նալյանի փոխարեն պատրիարք հռչակվեց Պրոխորոն Սիլիստրեցին՝ Երուսաղեմի միաբաններից, թող որ ընդամենը մեկ շաբաթվա պաշտոնակալությամբ[34], կարծում ենք, այդ պահպանողականության ձեռքի գործն էր: Կարծում ենք, որ այդ պահպանողականության՝ Հ. Նալյանի դեմ տրամադրվածությունը և դավանական բորբոքումներից խուսափելու մտայնությունն էր պատճառը, որ Պրոխորոնից հետո վերջինս նորից չստանձնեց պատրիարքի պաշտոնը: «Եւ զի յակոբ վերստին նստուցանել դժպատեհ համարեցան», – համառոտ հայտնում է Մ. Չամչյանը, «Նալեան այլեւս յանձնառու չեղաւ», – իր բացատրությունն է տալիս Մ. Օրմանյանը[35]: Իսկ թե ինչու, ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը բացատրություն չեն հայտնում, և մեզ մնում է կարծել, որ համայնքի գլխավորները, մերժելով Պրոխորոնին, միաժամանակ հաշվի են առել պահպա-

---

[32] *Օրմանեան. 2001, 3377, Գալէմքեարեան. 1908, 177, 181–182: Ազգային եկեղեցու և «հերձվածող» կամ այդպիսին ճանաչված գործիչների միջև նույնպես կային այլ ընդհանուր մոտեցումներ, ինչպես, օրինակ, վերաբերմունքը արևմտյան քրիստոնեական գրականության նկատմամբ. դրանց թարգմանաբար հրատարակությունը խրախուսում էին ոչ միայն ազգային ուղղության պատրիարքները (Հովհ. Կոլոտ, Հ. Նալյան և ուրիշներ), այլև, բնականաբար, կաթոլիկամետ ուժերը, ինչպիսին Մելքիսեթ Սուբհին էր՝ «պատրիարգս մայրաքաղաքին»: 1701 թ. նրա հրամանով է տպագրվել լատիներենից Պ. Բերդումյանի թարգմանած «Մտածական աղօթից» գիրքը (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, 1984, 174):*

[33] *Ասատուր 2011, 112:*

[34] *Չամչեանց. 1786, 862–863:*

[35] *Չամչեանց. 1786, 863, Օրմանեան, 2001, 3432:*

նողականության նշված վերաբերմունքը Հ. Նալյանի հանդեպ: Վերջինիս այդ հակառակորդները կաթոլիկներին «միշտ հակառակող» Մանուել քահանան և նրա գործակիցներն էին, ինչպես նկատում է Գր. Գալեմքյարյանը[36]*:*

1770-ական թվականներին օսմանյան իշխանությունները, այսուհանդերձ, միշտ բաց էին պահում կաթոլիկության հալածանքների ասպարեզում հայ համայնքի հնարավորությունների օգտագործման դուռը, որ նշանակում էր պառակտումները խորացնելու գնով դյուրացնել պայքարն ընդդեմ դավանափոխության: Թուրք պատմագիր Ջևդեթ փաշան գրում էր, որ նկատի առնելով հայերի մեջ դավանափոխության քաղաքական վնասակարությունը՝ կաթոլիկ հայերից մի քանի հոգի մահվան էին դատապարտվել, և որ հայերի «դավանանքին և ռայաների կարգուկանոնին հակառակ ընթացքի մեջ գտնվողներին դաստիարակելու և պատժելու մասին նրանց (հայերի— Ա. Խ.) կողմից ուղարկված և կնքված խնդրագրերը նկատի պիտի առնվեն և ամեն կերպ պիտի չմերժվեն»[37]*:*

Այդ նշանակում էր ազգային եկեղեցու հակակաթոլիկական դիրքորոշման ու գործելակերպի միաժամանակ խրախուսանք՝ դավանական հակասությունները հայ համայնքում բորբոքելու համար, որ պետք է խորանար հաջորդ տասնամյակներին՝ 1770–1790-ական թվականներին, հատկապես՝ Զաքարիա Կաղզվանցու պատրիարքության շրջանում:

Եզրակացություն

XVIII դ. առաջին կեսին Կոստանդնուպոլսի հայ համայնքում դավանական ներհակությունները խորանում էին կաթոլիկական քարոզչության ընդլայնմամբ և այդ դավանանքի հետևորդների քանակական աճով: Պայքարն ընթանում էր մի կողմից՝ արևմտյան դավանությանը դիմակայող ազգային եկեղեցու ու կաթոլիկական քարոզչության և մյուս կողմից՝ հայ կաթոլիկների ու նրանց վարչական խիստ պատիժների ենթարկող օսմանյան պետության միջև: Վերջինիս անհաշտ դիրքորոշումն ածանցվում էր միլեթների համակարգը պահպանելու մտահոգությունից և քաղաքական այն պատկերացումից, որ հակամարտ Եվրոպան կայսրության ազգաբնակչության մեջ դավանակիցների միջոցով կարող է ընդլայնել իր ազդեցությունն այդ երկրում: Այս մտայնությունը՝ կապված Բ. դռան ու կաթոլիկական պետությունների, և ամենից առաջ՝ Ֆրանսիայի հետ ունեցած փոխհարաբերությունների հետ, բնութագրվում է իր ոչ միանշանակ դրսևորումներով՝ դավանափոխության դեմ օսմանյան պետության՝ մերթ սաստկացող և մերթ թուլացող մաքառումներում: Քաղաքական հակասությունների այս պայմաններում XVIII դ. երկրորդ տասնամյակից հետո նոր ուղեգիծ է նկատվում պոլսահայ համայնքում շրջանառող կաթոլիկական ռազմավարության մեջ. եթե նախորդ ժամանակաշրջաններում այն

---

[36] *Գ ա լ է մ ք ե ա ր ե ա ն. 1908, 301:*

[37] *Թուրքական աղբյուրները ... 1961, 238: Այսուհանդերձ, «կաթոլիկացեալ հայերի» դեմ որպես կանոն, կիրառվում էին պատժի ոչ առավելագույն չափեր. պատրիարք Զաքարիայի ժամանակ ևս, ինչպես նախկինում, իշխանություններին հրահանգվում էր «զինչս եւ ստացուածս չարափառաց (հերձվածողներին— Ա. Խ.) ի յարքունիս կալնուլ, զինքն տալ ի ծառայութիւն թէրսխանային»: Դատապարտվածները կարող էին ազատվել միայն պատրիարքի միջնորդությամբ (Դիւան Հայոց պատմութեան. 1912, 231):*

ձգտում էր դավանափոխության ասպարեզում առավելագույնի հասնել պատրիարքական աթոռին տիրանալով, ապա այժմ այդպիսի ձգտմանը փոխարինում է քարոզչության առավել արդյունավետ ձևերի կիրառումը՝ քարոզչական ամբիոնների ապահովումն ազգային եկեղեցիներում (որին դիմակայելու համառությամբ առանձնապես աչքի չէր ընկնում հայ եկեղեցին), կաթոլիկական եկեղեցիներում պաշտամունքի արարողություններին հայ ունկնդիրների ներգրավումը և այլն: Միաժամանակ, այս պայմաններում դավանական հակասությունների խորացումները կանխելու կամ մեղմելու գործում կարևոր նշանակություն ունեցան պատրիարքներ Հովհ. Կոլոտի և Գր. Շղթայակրի ճկուն և հաշտարար վերաբերմունքը հայ կաթոլիկների գլխավորների ու հատկապես, ֆրանսիական դեսպանի հետ ունեցած փոխհարաբերություններում:

Հակասական բնույթ ուներ Հովհ. Կոլոտի և նրա յուրայինների կողմից խրախուսվող արևմտյան թարգմանական կրոնական գրականության հրատարակումը: Մի կողմից՝ այդ գրականությունն ամրապնդում էր հայ կաթոլիկ քարոզիչների բանավիճային դիրքերը, մյուս կողմից՝ ճանաչողական արժեքներ էր տրամադրում հայրենի եկեղեցուն հավատարիմ կրթված եկեղեցականներին՝ արևմտյան աստվածաբանական մտքի, լուսավորության և մշակույթի ասպարեզներում:

Ալբերտ Խառատյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, հայ մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, «Բանբեր հայագիտության» հանդեսի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի և մամուլի պատմություն, Օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 9 մենագրության և ավելի քան 200 հոդվածի: ORCID:0009-0005-8436-1288.
alkhar39@ mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղաւնունի Մ. 1929, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 544 էջ:

Ասատուր Հ. 2011, Կոստանդնուպոլսի հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպուլ, Յովակիմեան մատենաշար, հրատարակիչ Պոլսի Պատրիարքութիւն Հայոց, 275 էջ:

Բամպուքճեան Գ. 1984–1985, Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678–1741), Ստանպուլ, Dizgi ve Baskı Murad offset, 415 էջ:

Գալէմքեարեան Գր. 1915, Կենսագրութիւն երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու, Վիեննա, Մխիթարեան տպարան, 384 էջ:

Գալէմքեարեան Գր. 1908, Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վիննա, Մխիթարեան տպարան, 433 էջ:

Դիւան Հայոց պատմութեան. 1912, գիրք Ժ, ԺԵ–ԺԹ դար, հրատ. Գ. Աղանեանց, Թիֆլիս, տպարան Ն. Աղանեանց, 602 էջ:

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին. 1961, հ. Ա, կազմ. Սաֆրաստյան Ա. Խ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 403 էջ:

Կիլէսէրեան Բ. 1904, Կոլոտ Յովհաննէս պատրիարք, Վիեննա, Մխիթարեան տպարան, 232 էջ:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. 1984, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1467 էջ:

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1966, հ. 1, կազմ. Ն. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 676 էջ:

Յիշատակարան Պասմաճեան Գրիգոր Պատրիարքի. 1908, Պարիս, տպագրութիւն «Բանասէրի», 149 էջ:

Յովհաննէս Հաննա. 1734, Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս և Սրբոց տնօրինականաց Տեղեաց, Կ.Պոլիս, տպարան Մահտեսի Աստուծատուր, 378 էջ:

Չամչեանց Մ. 1786, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, ի տպարանի Յովհաննու Փիացեանց, 895+195 էջ:

Պալճեան Ա. 1878, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա, Վիեննա, ի Մխիթարեան տպարանի, 333 էջ:

Ստորագրութիւն ուղղորութեան Տ. Գրիգորի պատրիարքի Ս. Աթոռոյս յԵրուսաղէմի ի Կ. Պոլիս. 1866. – «Սիոն» (Երուսաղէմ), թիւ 12, էջ 184–190:

Տայեան Ղ. 1930, Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707–1773, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 371 էջ:

Տեր Յովհաննէսեանց Ա. 1890, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. Ա, Երուսաղէմ, ի տպարանի Սրբոց Յակոբեանց, 461 էջ:

Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին. 1964, կազմ. Մեսրոպ վրդ. Քէշիշեան, Վիեննա, Մխիթարեան տպարան:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3893 էջ:

ИЗ ИСТОРИИ РЕЛИГИОЗНЫХ ПРОТИВОРЕЧИЙ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ КОНСТАНТИНОПОЛЯ (1715–1764 гг.)

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Ключевые слова: Армянская община Константинополя, армяне-католики, Ованнес Колот, Григор Ширванци (Шгтаякир), монастырь Св. Акопянца, Акоп Налян, Петрос Кьютур, религиозные противоречия, Ангора, переводная католическая литература.

Во времена Константинопольского армянского патриарха Ованнеса Колота, благодаря его благоразумию, были предотвращены частые вспышки расколов в армянской общине. Были расширены переговорные процессы с армянскими католиками. Для Ованнеса Колота и его единомышленников основа диалога заключалась в том, что католики, будучи членами армянской общины, должны воздерживаться от конфронтации с национальной церковью, что также позволит избежать преследований со сторо-

ны государства. Вместо этого, как показывают факты, главы общины предоставили армянским католикам сцены (для проповедей) в национальных церквях, запретили антихалкидонские выступления в этих церквях и т.д. В ряде вопросов Ованнес Колот сотрудничал с французским послом в Константинополе, который руководствовался не религиозной ограниченностью, а политическими интересами Франции. Вопреки этому, католическая пропаганда пыталась полностью отделить армян-католиков от Армянской церкви и совершать религиозное богослужение только в католических церквях, в соответствии с религиозными церемониями последних.

Несмотря на все это, в интересующий нас период католическая идеология продолжала пользоваться успехом среди последователей Армянской церкви, а суровое преследование вероотступников со стороны османских властей провалило попытки устранить противоречия в армянском обществе. В то время как Османское государство то усиливало, то ослабляло борьбу с вероотступничеством (в соответствии со своими интересами), Армянский Патриархат был вынужден подстраивать свое отношение и действия под политику государства в этих сложных условиях борьбы с национальным расколом.

Альберт Харатьян – д. и. н., проф., член-корреспондент НАН РА, главный научный сотрудник Института истории НАН РА, заведующий отделом истории армянской периодической печати и общественной мысли, главный редактор журнала «Вестник арменоведения». Научные интересы: история армянской общественно-политической мысли и периодической печати, история армянских общин Османской Турции. Автор 9 книг и более 200 статей. ORCID:0009-0005-8436-1288. alkhar39@mail.ru

FROM THE HISTORY OF RELIGIOUS CONTRADICTIONS IN THE ARMENIAN COMMUNITY OF CONSTANTINOPLE (1715–1764)

ALBERT KHARATYAN

S u m m a r y

Keywords: Armenian Community of Constantinople, Armenian Catholics, Hovhannes Kolot, Grigor Shirvantsi (Shgtayakir), St. Hakobyants Monastery, Hakop Nalyan, Petros Kyutur, religious contradictions, Angora, translated Catholic literature.

During the reign of Armenian Patriarch Hovhannes Kolot of Constantinople, thanks to his prudence, frequent outbreaks of splits in the Armenian Community were prevented. Negotiation processes with Armenian Catholics were expanded. For Hovhannes Kolot and his associates, the basis of the dialogues was that the

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2024 № 3

Catholics being members of the Armenian Community should refrain from confrontations against the national church, which would also help to avoid persecution by the state. Instead, as the facts show, the leaders of the community provided Armenian Catholics a stage (for sermons) in the national churches, banned the anti-Chalcedonian demonstrations in those churches, etc. In a number of issues, Hovhannes Kolot cooperated with the French ambassador to Constantinople, who was guided not by religious limitations but by the political interests of France. Contrary to that, the Catholic propaganda tried to completely separate the Armenian Catholics from the Armenian Church and to perform their religious worship only in the Catholic churches according to the religious ceremonies of the latter.

Despite all this, in the period of our interest, the Catholic ideology continued to achieve success among the followers of the Armenian Church, and the strict persecution of apostates by the Ottoman authorities failed the attempts to eliminate contradictions in Armenian society. While the Ottoman state either strengthened or weakened the fight against apostasy (according to its interests), the Armenian Patriarchate was forced to adjust its attitude and actions to the state policy in these difficult conditions of the struggle against national division.

Albert Kharatyan – Doctor of Historical Sciences, Professor, Corresponding Member of NAS RA, Chief Researcher at the Institute of History of NAS RA, Head of the Department of Armenian History of Press and Social Thought, Editor-in-Chief of the journal "Bulletin of Armenian Studies". Scientific interests: history of the Armenian socio-political thought and periodical press, history of the Armenian communities of Ottoman Turkey. Author of 9 books and more than 200 articles. ORCID:0009-0005-8436-1288. alkhar39@mail.ru